ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԱԿԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՄՈՒՆՔՆԵՐԻՑ

—

Ուսումնարանական վարչական ցանձնաժողովս նկատելով՝ որ քանի գնում բազմանում են մասնաւոր անձինքների և սրանցից վկայականներ ստացողների թիւը հայկական ձայնագրութեան ուսուցիչ լինելու համար՝ ուստի քննելով այն խնդիրը թէ արդեօք մասնաւոր անձինք իրաւունք ունի՞ն այդպիսի վկայականներ տալու՝ որը վաւերական համարուի պատշաճաւոր իշխանութիւնից՝ որոշեց՝ որ այդ իրաւունքը պէտք է վերապահել միայն ձեմարանին և թեմական դպրոցներին՝ իսկ այդ մասնաւոր անհատների տուած վկայականները մերժել և թոյլ չտալ այսուհետև այդպիսի վկայականներ ներկայացնողների անունները մուծանել ուսուցչաց ցանկը։

Խնդրատուներից ուսուցչաց և ուսուցչուհեաց ցանկը մուծուել են հետևեալ անձինք.

		Կարգ.
1.	Գրիգորեան Զաքարեա	Ա.
2.	Գուլուլեան Աննա	Ժ.
3.	Երզնկեան Եղնիկ քահանայ. . . .	Է և Գ.
4.	Խոսրովեան Նիկողայոս	Ա.
5.	Ղլբուղեան Կարապետ	Գ.
6.	Ղլբուղեան Սաթենիկ	Ժ.
7.	Մուրադբէկեան Ալէքսանդր. . . .	Գ.
8.	Վարդազարեան Բագրատ	Բ.
9.	Տէր-Աբրահամեան Գրիգոր	Ե.
10.	Տէր-Խէչատուրեան Օլգա	ԺԱ.
11.	Օհանջանեան Երանուհի	Ժ.